

րիչն Հայոց աշխարհին» : Այս տեղ, իր գործունեութեան այս բարձրութեան վրայ կը ցցուի մեր առջեւ իր մեծ անձնաւորութիւնը որպէս զարակազմիկ դէմք : Հզօր բազկովը կը կեցնէ ժամանակի անիւը, որ դէպի քայքայում միտած էր, եւ կու տայ անոր նոր ընթացք դէպի բարեօքում եւ բարգաւաճում :

Անդէն, անստացուածք նետուեցաւ կուռի ասպարէզ եւ ապաստան իւր հաւատքին եւ կամքի ոյժին ընկճեց թշնամին, նուաճեց յետս հայրենի աշխարհը, վերաշինեց զայն եւ քաղցրացուց հոն կեանքը : Ունէր ռազմագէտի շրջահայցութիւնը, հեռատեսութիւնը, կորովն եւ խոհականութիւնը, խիղախութեամբ հանդերձ : Մեծախորհուրդ էր, ատակ համախմբելու ամբոխը, կառավարելու զայն եւ նպատակին խրախուսելու : Իր յաջողութիւններու գաղտնիքը իր անձնագործութեան մէջ էր . «սա յոլով քան թէ սակաւ տքնութեամբ գրանս օրինացն ուսուցանէր . մանաւանդ թէ եւ գործովք կատարելով զանձն տայր օրինակ ամենեցուն» (Ղուկաս գրիչ) : Ոչ իւր անձը, այլ հասարակաց շահը կը փնտռէր իր գործերուն մէջ : Այս անձնագործութիւնը կը խրախուսէր հասարակութիւնը եւ կ'արծարծէր անոր վստահութիւնը : Ոչ ոք չի նայեց իւր լուծման, երբ կաթողիկոսը պահանջեց զայն . ընդհակառակը հարուստ եւ ազքատ ինքնակամ կը դնէին իրենց ոյժերը անոր տրամադրութեան տակ, որովհետեւ արգիւնքը հրապարակատես էր : Անոնց համագործակցութեամբը